SPECIAL INVESTIGATION SERVICE
OF REPUBLIC OF ARMENIA

СПЕЦИАЛЬНАЯ СЛЕДСТВЕННАЯ
СЛУЖБА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

13a, V. Vagharshyan str., 0012, Yerevan, Republic of Armenia
Tel: [+374 11] 900 019
press@ccc.am, www.ccc.am

Հայաստանի Հանրապետություն, 0012, ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա
Հեռ.՝ [+374 11] 900 019
press@ccc.am, www.ccc.am

Республика Армения, Ереван, 0012, ул. В. Вагаршяна 13а
Тел: [+374 11] 900 019
press@ccc.am, www.ccc.am

«01» նոյեմբերի 2016 թ.

«Հետաքննող լրագրողներ» հ/կ նախագահ,
«Հետք» թերթի գլխավոր խմբագիր
պարոն **ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի՛ Է. Բաղդասարյան,

Ի պատասխան Ձեր էլեկտրոնային հարցման՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում շարունակվում է պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից առերևույթ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու դեպքի առթիվ «Հետք» պարբերականի հրապարակման հիման վրա հարուցված քրեական գործի նախաքննությունը:

Քրեական գործի նախաքննության ընթացքում իրականացվել են մի շարք քննչական և դատավարական գործողություններ: Մասնավորապես՝ հարցաքննվել են բազմաթիվ անձինք, այդ թվում՝ Միհրան Պողոսյանը, նրա ազգականները, «Հետք» պարբերականի հրապարակման մեջ մատնանշված ինչպես միջազգային, այնպես էլ՝ հայաստանյան կազմակերպությունների մասնակիցները, տնօրենները, աշխատակիցները:

Քննության ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունից, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից, ինչպես նաև տարբեր այլ

կազմակերպություններից ձեռք են բերվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակող նյութեր:

Տեղեկացնում եմ նաև, որ Շվեյցարիայի Համադաշնության և Պանամայի Հանրապետության տարածքներում դատավարական գործողություններ կատարելու նպատակով կազմվել են քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդություններ և անհրաժեշտ նյութերի հետ ուղարկվել այդ երկրների իրավապահ մարմիններին, սակայն քննչական պահանջի արդյունքները դեռևս չեն ստացվել:

Հարգանքով՝

ՀՀ հատուկ քննչական ծառայության
մամուլի քարտուղար՝ **Միքայել Ահարոնյան**